


ԴԻՎԱՆ  
ՆԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ

VIII

ԵՐԵՎԱՆ 1999



ՈՒՐ ԷԼ ՈՐ ՀԱՍԵԼ, ՈՐՏԵՂ ԷԼ ԵՂԵԼ,  
ԶԱՆԱՅԵԼ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ.  
ՇԻՆԵԼ ԵՆՔ ԿԱՍՈՒՐՁ,  
ԿԱՊԵԼ ԵՆՔ ԿԱՄԱՐ,  
ԱՄԵՆ ՏԵՂ ՀԵՐԿԵԼ,  
ՀԱՍՑՐԵԼ ԲԵՐՔԵՐ...  
ԱՄԵՆ ՏԵՂ ԹՈՂԵԼ ՄԵՐ ԱՉՔԻՑ՝ ՅՈՒԱՆՔ,  
ՄԵՐ ՀՈԳՈՒՑ ՄԱՍՈՒՆՔ,  
ԵՎ ՆԵՆԱՐ՝ ՍՐՏԻՑ...

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Հայ վիճազրությանը նվիրված ներկա հատորի  
հրատարակման համակարգչային աշխատանքները կատարվել  
են ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում:  
Սույն հատորի հովանավորն է  
Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճյանը:

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

СВОД  
АРМЯНСКИХ НАДПИСЕЙ

ВЫПУСК  
VIII  
РОССИЙСКАЯ ФЕДЕРАЦИЯ

АВТОР-СОСТАВИТЕЛЬ Г. М. ГРИГОРЯН

CORPUS  
INSCRIPTIONUM ARMENICARUM  
LIBER VIII  
FOEDERATIO RUSSIAE

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА

ЕРЕВАН

1999


ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԴԻՎԱՆ  
ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ**

**ՊՐԱԿ VIII  
ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ**

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ՝  
ԳՐ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1999



ԴՄՀ 908  
ԳՄԳ.63.4(2Հ)+63.4(2Ռ)  
Դ520

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

Բ. Ն. Առաքելյան, Գր. Մ. Գրիգորյան,  
Գ. Հ. Կարախանյան, Պ. Մ. Մուրադյան, Ա. Ա. Քալանթարյան

Պրակի խմբագիրներ՝ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյան,  
պատմական գիտությունների թեկնածու Գ. Գ. Սարգսյան

Գիվան հայ վիմագրության: Պրակ VIII - Ռուսաստանի Դաշնություն (կազմ.-հեղ.  
Գր. Մ. Գրիգորյան, խմբ. Վ. Բ. Բարխուդարյան, Գ. Գ. Սարգսյան) - Եր., ՀՀ  
ԳԱԱ «Գիտություն» հրատ.- Եր., 1999, 315 էջ:

Մատենաշարի VIII պրակում զետեղված են Ռուսաստանի Դաշնության տարած-  
քի հայկական գաղթավայրերի հայերեն, ռուսերեն և այլալեզու վիմագրերն ու թանգա-  
րանային իրերի մակագրությունները: Իրրև պատմական հավաստի ակզրնադրյուրներ  
առավել կարևոր արժեք են ներկայացնում Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Կազանի,  
Հյուսիսային Կովկասի հանրապետությունների, առանձին մարզերի ու երկրամասերի  
վիմական քնագրերը, որոնք առնչվում են հայերին ու Հայաստանին:

Գիրքը նախատեսվում է հայ գաղթավայրերի պատմությամբ և ԱՊՀ երկրների  
անցյալի կապերով զբաղվող մասնագետների համար:


Դ. 0505000000  
703(02)-99

ԳՄԳ 63.4(2Հ)+ 63.4(2Ռ)

ISBN 5-80.80-0144-7

©

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999



### ԿԱԶՄՈՂ-ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա պրակում զետեղված են Ռուսաստանի Դաշնության տարածքի՝ Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի, Ռոստովի և Աստրախանի մարզերի, Թաթարստանի, Հյուսիսային Օսիայի, Չեչնիայի և Դաղստանի ինքնավար հանրապետությունների հայկական և հայերի մասին այլալեզու փմագրություններն ու թանգարանային իրերի մակագրությունները: Իրրև հավաստի ակզրնաղղյուրներ, դրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում այդ տարածքներում ապաստանած հայ զանգվածների սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական հարարեությունների, կրթա-մշակութային կյանքի, պատմական անցողաթների և ընդհանրապես տարրեր ազգերի ու ազգությունների հետ հայության ունեցած աղերսների մասին: Այս առումով՝ հայկական գաղթօջախների արձանագրությունները ունեն մույն կարևորությունը. ինչ մեր ձեռագիր մատյաններն ու մրանց անկրկնելի հիշատակարանները:

Նկատի ունենալով այն իրողությունը, որ այսօրվա հախուրն սեփականաշնորհման և շինարարական աշխատանքների ընթացքում հաճախ ոչնչանում և կորչում են առավելապես հիշատակագրային փոքրածավալ կողողները, մպատակահարմար ենք գտել ներկա պրակում զետեղել մակ հետագույն ժամանակների ընտրանի ընագրերը:

Ժողովածուն պատրաստելիս կիրառվել են հետևյալ ակզրնաղղերը.

1. Ռուսերեն կամ այլալեզու զուգահեռներ ունեցող արձանագրությունները, եթե մրանցում կան այս կամ այն անձի ինքնության, զրաղեցրած հասարակական դիրքի, մասնագիտության կամ դասային պատկանելության մասին տեղեկություններ, մեքրեղվում են ամրողղջությամբ և համարվում են առանձին ընագիր: Որպես կանոն, այղղպիպիք մտնում են ընդհանուր համարակարգի մեք: Օրինակ՝ հայերեն ընագրում մշված է *Կարապետ Մկրտչեան Հայրապետեանց*, իսկ ռուսերեն զուգահեռ արձանագրության մեք, ըացի անվանափոխության երևույթից, տեղեկություններ կան մասնագիտության վերարեղղալ՝ «Естествоиикъ-химикъ Карп Никитичъ...»:

2. Էական մշանակություն չունեղղ կամ հայերեն ընագրի ըստացի թարգմանությունը ներկայացնող այլալեզու զուգահեռները հիմնականում չեն տրվում, ուստի չեն մտցվում հերթական համարակարգում: Նման դեպքերում հակիրճ մշվում է՝ «Օարունակությունը՝ ինչպես հայերենում» կամ «Նույնը՝ ինչպես ռուսերենում»:

3. Ռուսերեն և այլալեզու արձանագրությունները հայերենին զուգահեռ ամրողղջությամբ մեքրեղվում են մակ այն դեպքերում, երր մրանցում առկա են հայերեն անունազգանունների մկատելի փոփոխություններ: Օրինակ՝ *Դշխուհի-Նատալյա, Մելքոն-Եմելյան, Եղիազարյան-Լազարև, Թորոսյան-Տարասով, Ալթինյան-Մուվարով* և այլն: Ընդօրինակվում են մակ այնպիսի զուգահեռները, որոնցում հիշատակված անունազգանունները թեն ռուսերեն են, ասկայն հայերեն ընագրում հանդես են գալիս հայոց լեզվի քերականական կաղղապարով՝ *Մայաֆեն-Մայաֆեանց, Վլասով-Վլասեանց* և այլն: Մոսկվայի հայ խոշոր վանատականներից ոմանք ռուսերեն ընագրերում ներկայացված են առավելապես ռուսական ազգանուններով՝ *Մաղովհիկով, Սավելև, Սերեբրով*: Ազնվական դասի ներկայացուցիչների հիշատակագրություններում կան տոհմիկ պատկանելությունն ընդգծող հատուկ տերմիններ, որոնք զուգահեռ տեքստերում կիրառված են թարգմանարար: Օրինակ՝ ռուսերեն *րոյարինը* հայերենում թարգմանված է *վեհագն*, իսկ *դվորյանինը*՝ ազնիվ:

4. Օտարալեզու (լատիներեն, գերմաներեն) արձանագրությունները մեջբերվում են ամբողջությամբ, անկախ այն պարագայից, թե մրանք հայերեն ընագրերի կոկնություններ են:

5. Մի ջարք դեպքերում հայերեն տառերով փորագրված են ոուներեն ամբողջական ռառակապակցություններ: Օրինակ՝ «Դեխտլիտելնի ստատսկի սովետնիկ», «Գուքերնսկի սեկրետար» և այլն: Դրանք մույնպես բերվում են գուգահետարաբ:

Պրակում զգալի քսմակ են կազմում վիմագիր ռամաստեղծությունները: Այստեղ մնուներ կան Ռ. Պատկանյանի, Ջիվանու, Գր. Խալաթյանի և մեզ ամհայտ ռազմաթիվ անձանց ստեղծագործություններից:

Ռուսաստանի Դաշնության արձանագրություններում Ռիշատակվում են տարրեր դասերի ու խավերի մերկայացուցիչներ՝ գիտության ու մշակույթի գործիչներ, զինվորականներ, վաճառականներ, հոգևորականներ, արդյունարերողներ, արհեստագործներ և այլն:

Հետաքրքրություն է մերկայացնում հայ ազգարմակչության տեղաշարժման պատկերը: Այստեղ տեսնում ենք Ռուսաստան գաղթած ջուղայեցիների, կարիմցիների, այլքսամդրապոլցիների, դարարաղցիների, աստրախանցիների, եղեսիարմակ մոզղուցիների, կանկանցիների, պարսկահայերի և ռազմաթիվ այլ քաղաքներից ու գյուղերից տեղափոխված հայ գերդաստանների:

Հավաքչական աշխատանքների ընթացքում տեղերում մեզ աջակցել են Մոսկվայի կրեմլի Ջինապատի, Պատմության Կենտրոնական թանգարանի, Սանկտ-Պետերբուրգի Պետական Էրմիտաժի, Ալ. Նևսկու Մայրավանք-թանգարանի գիտական աշխատակիցները, վիմագրագետ Վ. Ի. Լավրովը, արվեստարան Ա. Յա. Կակովկինը (Սանկտ-Պետերբուրգ), Դերենտի քաղաքային թերթի աշխատակից, լրագրող Մ. Հարությունյանը, Ռուստովի մարզի Մյասնիկյանի շրջանի «Կոմունիզմի սրբալույս» թերթի խմբագիր երջանկահիշատակ Օ. Մ. Օահինյանը, Չալթր շրջկենտրոնի տպարանի տնօրեն Ա. Մ. Պոպովյանը և ուրիշներ, որոնց հայտնում ենք խորին ջնորհակալություն:

Արժեքավոր խորհուրդներով մեզ օգնել ու աջակցել են ակնդեմիկոսներ Բ. Ն. Աուքեյանն ու Վ. Բ. Բարխուդարյանը:

Գրքիս հրատարակության առիթով՝ մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Երևանի Պետական համալսարանի Աստվածարմության ֆակուլտետի հիմնադիր-դեկան, փիլիսոփայական և ռամասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Օահե արքեպիսկոպոս Աճեմյանին, որը սիրահոժար համաձայնեց աջակցել լույս ընձայելու մեր պանդոխտ մախնիների սուրբ հիշատակները ամմոուսց դարձնող այս մատյանը՝ «Դիվան հայ վիմագրության» մատենաշաղի VIII պրակը: Եվ մեր աներկրա գնահատանքի արտագին խոսքը կրկին ուղղելով Օահե Սրբագանին՝ հիշում ենք Սուրբ Ավետարանի խորիմաստ դրույթներից մեկը. «Ըատ գործոց Ձերոց եղիցին Ձեզ»:

Կազմողն այն կարծիքին չէ, թե պրակում ղնոգրկված են Ռուսաստանի Դաշնության անձայրածիր տարածքի բոլոր վիմագրերը: Դա ամասելի ծանր աշխատանք է, որի համար պահանջվում են երկարատև դեգերումներ, գերագույն համբերություն և մյուսական զգալի միջոցներ...

Օրջագալությունների ժամանակ մենք ձգտել ենք վերձանել և ընդօրինակել այն ընագրերը, որոնք առավել կարևոր արժեք են մերկայացնում հայոց պատմության և հայ-ռուսական դարավոր կապերի ուսումնասիրության համար:

Այժմ գոյություն չունեցող ընկերությունները արվում են նախորդ հրատարակիչների ընդօրինակումներով:

Պրակը, հուսով ենք, օգտակար է լինելու հայագիտության ամենատարրեր ընթացակարգներով գրադրող մասնագետների համար:

Լուսանկարները կատարել են Վ. Մ. Բոյկոն (Մոսկվա) և ուրիշներ: Գրչագրերի հեղինակն է ինստիտուտի վիճակագրության բաժնի աշխատակից Լ. Ա. Ավագյանը:

Գ. Մ. Գրիգորյան

Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

#### От автора-составителя

Институтом археологии и этнографии НАН Республики Армения готовятся к академическому изданию отдельные выпуски "Свода армянских надписей" не только современной Армении, но и бывших армянских колоний. В 1996г. вышел в свет очередной VII том "Свода" (составитель Г. М. Григорян), куда были включены армянские и иноязычные (об армянах) надписи Украины и Молдовы.

VIII том охватывает более 800 текстов, собранных при экспедиционно-полевых работах в Москве, Санкт-Петербурге, Краснодарском и Ставропольском краях, Ростовской области, Татарии, Северной Осетии, Чечне, Дагестане и других северокавказских республиках Российской Федерации.

Публикуемые надписи датируются XV-XX вв. и по содержанию представляют:

1. Мемориальные
2. Строительные
3. Дарственные
4. Библейские

Надписи высечены на разных строениях, надгробных памятниках (эпитафии), хачкарах, а также на церковной утвари (митры, посохи), культовых предметах (кресты, потиры, кадилницы, мощехранители-дароносицы). Они дают достоверные сведения о построении христианских храмов и гражданских сооружений, об основании учебных заведений и т. д.

В надписях библейского содержания обычно приводятся выдержки главным образом из Евангелия.

В числе других нарративных источников, историческую ценность представляют армянские надписи Москвы и Санкт-Петербурга. В них упоминаются жившие в России армянские общественные деятели, ученые, священнослужители, поэты, военачальники, купцы, промышленники, люди разных профессий. В надписях представлены армянские знатные фамилии-бояре, графы, князья, дворяне, а также почетные граждане, советники разных рангов (надворные, тайные, действительные, статские, титулярные).

На обелиске у центрального входа в Лазаревский институт (ныне здание посольства Республики Армения в Москве) высечены в рифме слова признательности бывшего лазаревца, известного русского литератора и поэта А. Мерзлякова, где, в

частности, говорится:

"Действительному статскому советнику и командору Ивану Лазаревичу Лазареву  
ОСНОВАТЕЛЮ ИНСТИТУТА

Отъ древня племени Арменіи рожденный  
Россіей-матерью благои усыновленный.  
Гайканцы! Вашихъ онъ сиротъ не позабылъ,  
Разсадникъ сей души признательной творенья  
Даруетъ чадамъ здесь покой и просвещенье,  
Отчизне той и сей онъ долгъ свои заплатилъ".

Многие воины-армяне участвовали в битвах за Россию. Об этом повествуют надписи надгробных памятников Москвы, Санкт-Петербурга и других городов. На московском армянском кладбище похоронен уроженец Карабаха генерал-майор русской армии Павел Моисеевич Меликов (Погос Мовсисян Меликянц, 1776-1848). Надпись в рифме гласит о том, как он верно служил императору, участвовал в разных сражениях против врагов Отечества, а на Вородинской битве потерял свою руку. В Москве, в доме Мещаниновых, генерал П. Меликов часто встречался с молодым поэтом М. Ю. Лермонтовым, который внимательно слушал рассказы о Бородинской битве. Так рождалась поэма "Вородино".

В Санкт-Петербургском армянском кладбище покоится и другой участник Бородинской битвы гвардии штабс-капитан Заал Фиралов (Заал Гиранян), эпитафия которого высечена на трех языках-армянском, русском и грузинском. Русский текст, в частности, гласит:

"Имъ же образомъ желаетъ елень/ на источники водныя, си же же желаетъ/ душа моя къ теб' Воже. В 1812-ом году былъ въ разныхъ страженіях/ противъ враговъ Отечества, раненъ/ пулею подъ Вородинымъ и тою/ скончался..."

На том же Смоленском армянском кладбище воздвигнут памятник соратнику А. Суворова- генерал-майору, полному кавалеру орденов св. Георгия и св. Владимира Акиму Васильевичу Хастатову (Овакиму Барсеговичу Хастатяну). В 40 лет он стал генералом, участвовал во многих сражениях под Кинберном, Фокшанами, Римником, особо отличился при взятии у турок крепости Измаил. Об этом храбром воине часто

упоминается в письмах великого полководца<sup>1</sup>. Любовь А.В. Суворова к армянскому народу объясняется и тем, что мать его Евдокия (Авдотья) Феодосеевна Манукова была армянкой, внучкой офицера лейб-гвардии Преображенского полка, а отец Феодос Семенович 60 лет своей жизни посвятил служению в императорской армии<sup>2</sup>.

Значительная часть армянских лапидарных надписей России высечена в стихотворной форме. Ярким примером являются мемориалы Григора Ивановича Халдарова (Халдаряна)-основателя первой армянской типографии в Санкт-Петербурге (1781г.) и Мариам-Клеопатры Сарафян- создателя первого в России учебника для армян и россиян. Из эпитафии узнаем, что Клеопатрою она была названа императрицей Екатериной Второй "по красоте ея лица".

В России жили и работали крупные армянские интеллектуалы: профессора императорского университета К. Патканян, Н. Нерсисян, М. Амиди и др., высококлассные преподаватели Лазаревского института восточных языков М. Мсерянц, Мкртич (Никита) Эмин, Г. Кананян, Ст. Назарянц, Гр. Халатян, поэт С. Шахазиз, автор книги "Эпоха великих реформ" Гр. Джаншян (Джаншиев) и многие другие, о которых красноречиво говорят армянские надписи российских столиц.

Привлекает внимание ономастологическая картина армянских эпитафических источников. Иногда без сопутствующего материала и параллельных текстов весьма трудно угадать, что носившие русские фамилии Власов, Кистов, Коротов, Малофеев, Савельев, Садовников, Серебров и др. по национальности были армяне. Тоже самое мы видим в личных именах, когда Вардуи становится Розалией, Ованнес-Иваном, Сагател-Савелием, Геворг-Егором и т. д. По данным надписей, армяне-поселенцы России в основном были из коренной Армении, а также из Крыма, Астрахани, Н. Нахичевана, Тифлиса и других краев. Значительную часть составляли карабахские армяне, пополнившие ряды русских воинов и полководцев.

Впервые издаются армянские надписи музейных экспонатов Московского Кремля, Центрального исторического музея, Государственного Эрмитажа, Музея народов Востока и других культурных центров.

Пользуясь приятным событием выхода в свет VIII выпуска "Свода армянских надписей", мы искренне благодарим архиепископа Шагз Ачмяна - доктора философии и филологии, декана Вогословского факультета Ереванского государственного университета, организовавшего в эти трудные дни публикацию нашего

<sup>1</sup> А. В. Суворов, Письма, изд. подготовил В. С. Лопатин, М., "Наука", 1987, с. 131, 177, 178, 191, 227-229, 251, 520, 561, 627, 645.

<sup>2</sup> Там же, с. 469, 503.

многoletнего труда.

Мы признательны нашим российским коллегам: руководству Оружейной палаты Московского Кремля, бывшему главному хранителю фондов Сизову Е. С., научным сотрудникам Марковой В. И., Костиной И. Д. и Каталинской Г. М., директору Центрального исторического музея Левыкину К. Г., научным сотрудникам доктору исторических наук Постниковой М. М., Платоновой Н. Г., Ульяновой Б. Л., высококлассному фотографу Боико В. М.

При составлении "Свода" с благодарностью были использованы присланные из Санкт-Петербурга фотоснимки искусствоведа-армениста Каковкина А. Я.

По просьбе московских коллег нами были безвозмездно переведены на русский язык интересные их восточные тексты армянских экспонатов.

Армянские эпиграфические надписи наглядно показывают исторические связи и вековую дружбу народов Армении и России. Они дают определенное представление о политических, социально-правовых реалиях, культурно-духовной близости и совместной борьбе за великую Справедливость.

Г. М. Григорян

Доктор исторических наук, профессор

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մ. Բժշկյան-Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830:
- Գր. Գրիգորյան, ՄՋՀԱ-Գր. Մ. Գրիգորյան, Մոսկվայի Կրեմլի Ջինապատի Հայերն արձանագրութիւնները «Լրարեր Հասարակական գիտութիւններ», 1982, № 8:
- Գր. Գրիգորյան-Գր. Մ. Գրիգորյան, Վիճագրական տեղեկութիւններ Հայ-ուսական Հարանրութիւններ մասին (ըստ Լենինգրադի և Մոսկվայի նյութերի). ՀՍՍՀ ԳՍ «Լրարեր Հասարակական գիտութիւններ», 1983, № 8:
- Ե. Մուշեղյան-Եվգ. Մուշեղյան, Հականշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1-ին, Հայերն արձանագրութեամբ առարկաներ, աշխատասիրութեամբ եվգինե Մուշեղյանի, Երեան, 1964:
- Ե. Մահազիզ-Էռմ. Եւահազիզ. Նոր Նախիջևանը և նոր Նախիջևանցիք, «Ազգագրական Հանդես» գիրք 6 և 7, թիֆլիս, 1901, 1903:
- Ա. Ջալալյան - Սարգիս եպիսկոպոս Ջալալեան, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858:
- Հ. Ջանիդաղյան - Հ. Մ. Ճանիդաղյան. Կողայր ակերին Հայտնարեղծ Հայկական արձանագրութիւնները. «Բանրեր Մասնագարանի», 1973, № 11:
- А. Каковкин, Памятники, — А. Я. Каковкин, Памятники художественного серебра из армянской церкви св. Екатерины в Петербурге. "Историко-филологический журнал АН Арм ССР" 1981, №2.
- А. Каковкин — А. Я. Каковкин, Армянский серебряный ковш XVI в., "Вестник общественных наук АН Арм. ССР", 1977, №3.
- Кучук-Иоаннесов — X. Кучук-Иоаннесов, Армянская надпись из Таганрога. "Древности Восточные", т. IV, М. 1911.
- И. Орбели — И. А. Орбели, Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями. "Христианский Восток", т. V, вып. I, Петроград, 1916.
- А. Смирнов — А. П. Смирнов, Армянская колония города Болгар. "Материалы и исследования по археологии СССР", вып. 61, М., 1958.
- С. Шпилевский — Древние города и другие болгаро-татарские памятники в Казанской губернии С. М. Шпилевского, Казань, 1877.
- Saint-Martin - M. Saint-Martin, Notes sur les inscriptions arméniennes de Bulgharie. Journal Asiatique, VIII, Paris, 1831.

**Պայմանական նշաններ**

— **զծիկով նշված են** ընաբերի համապատասխան թվով շարված գրերը (գծադրության մեջ):

... կետերով նշված են ընաբերի (գծադրության մեջ) շարված դրերը՝ անկախ քանակից:

[ ] **փակագծով նշանակված են** շարված գրերի վերականգնումները (վերծանության մեջ):

[ ] **փակագծով նշանակված են** ընաբերի մեջ գրչի բաց թողած, սղած կամ առանց պատվի (սղման նշան) սղումները (վերծանության մեջ):

[ ] **փակագծով նշանակված են** ընաբերում եղած ավելորդ գրերը (վերծանության մեջ):

[ ] **զծիկով նշանակված են** ընաբերի առղերի սահմանները (վերծանության մեջ):

Մ Ո Ս Վ Վ Ա

1380թ. սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ Կուլիկովյան ճակատամարտը, որը ցնցեց թաթար-մոնղոլական տիրապետության հիմքերը Ռուսաստանում: Սյդ ճակատամարտին մասնակցում էին նաև «առևտրի հյուրերը», որոնք ակադ. Լ. Ս. Խաչիկյանի կարծիքով եղել են զրեմաշայ վաճառականներ<sup>1</sup>: Նրանցից տասը դիտարկել են աշխարհագրային դեղերը: Հիշատակվում է, որ այդտեղ՝ մարտի դաշտում քաղաքը զոհվեց հայազգի վոյեվոդ (զորավար) Անդրեյ Սերկիզովին<sup>2</sup>: «14-րդ դարի վերջերին,- գրում է Լ. Ս. Խաչիկյանը,- հայերի երթևեկը Մոսկվա այնքան է բնորոշվել, որ նրանցից շատերը մշակական բնակության հաստատելով այնտեղ, աստիճանաբար բարձր դիրքեր են զբաղեցրել մեծ իշխանության տարբեր ոլորտներում, մասնավորապես առևտրի բնագավառում»<sup>3</sup>: Հիշատակվում է, որ 1390 թ. Մոսկվայում ծաղած հրդեհը սկսվել էր հայազգի ոմն Արրահամի անից<sup>4</sup>:

Ռուս կղերականությունը, զգուշանալով այն մաքրից, որ Մոսկվայի հայերն իրենց դավանանքով կարող են ազդեցություն դրածու ուղղափառ հավատացյալների վրա՝ արդեականներ էր ասեղծում երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների նկատմամբ: Մոսկվայի միտրապոլիտ Գիպրիանոսը 14-րդ դարի վերջերին և 15-րդ դարի սկզբներին կատաղի հարձակումներ էր դրոժում հայերի դեմ՝ նրանց դավանանքը համարելով «խոսելի հերձված»<sup>5</sup>: Սյս փաստը ենթադրել է տալիս, որ հասարակական կյանքում մտերմիկ կապեր էին ստեղծվել Հայ-լուսավորչական համայնքի և ռուս-ուղղափառ եկեղեցու հետեորդների միջև<sup>6</sup>:

Մոսկվայում մեծ հռչակ էին վայելում հայ վաճառականները: Աղղրնազրյուրներում հիշատակվում է Կակոս (Կիրակոս) Կաֆայեցին, որն ունեցել է նաև «միզովին» (ջուրահամեմ, ջուրահամեմ) մականունը<sup>7</sup>: Այս Կակոսի օժանդակությամբ էր, որ Իվան 9-ն հարարերություններ հաստատեց Ղրիմի Մենդլի Գիրեյ խանի հետ, փրկազնեց Ղրիմի թաթար իշխանությունների կողմից արդելափակված ռուս վաճառականներին<sup>8</sup>: 14-րդ դարի 90-ական թվականներին Իվան 9-ի մոտ մեծ հեղինակություն էր վայելում հայազգի վաճառական Պողոսը<sup>9</sup>: Ռուս իշխանի մերձավոր զործակիցներից էր զրեմաշայ վաճառական Բոդախը<sup>10</sup>:

Մոսկվայի Սրեանեակի փողոցի վրա 1599 թ. հիշատակվում է «Հայկական կարավանատունը» («Армянский двор»)՝<sup>11</sup>: Կրեմլի առջևի հրապարակում էր դառնվում «Սուրբոյան

1 Լ. Ս. Խաչիկյան, Հայերը Քիմ Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Համեր Մատենադարան», №13, Երևան, 1980, էջ 72, 75, 76, 83, ծանոթ. 234: Այսուհետև՝ Հայերը Հիմ Մոսկվայում:  
2 Նույն տեղում, էջ 76:  
3 Նույն տեղում, էջ 91:  
4 В. Е. Сыровчковский, Гости-Сурожане, М.-Л., 1935, с. 23.  
5 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 60:  
6 Նույն տեղում, էջ 61: Հսմո. М. Н. Тихомиров, Средневековая Москва в XIV-XV вв., М., 1957, с. 215. տես նաև Л. Меликсет-Бек, Древняя Русь и Армения. "Сборник трудов Института языка АН Арм. ССР", 1946, с. 122.  
7 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 79:  
8 Նույն տեղում, Քսմո. В. Сыровчкови, Զրվ. աշխ., էջ 40-41:  
9 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 80, Վ. Ա. Միրզախանյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Բ. 1, էջ 45-46:  
10 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 79:  
11 Н. М. Карамазин, История государства российского, изд. Н. Эйнерлинга, т. X, СПб., 1843, с. 155.

մեաաքսի վաճառաչարքը»<sup>1</sup>: «Սուրոժյան վաճառատուն» կար նաև Նովգորոզում: Հայ վաճառականները Ռուսիայում այնքան էին շաաացել, որ 1486 թ. սահմանվում է նրանցից վերցվելիք հարկի չափը<sup>2</sup>:

1469 թ. Իվան Գ-ն արշավանք կազմակերպեց Ղազանի խանության դեմ: Սյւ արշավանքին եռանդուն մասնակցութիւն ունեցան նաև «սուրոժցի» հայերը: «1480 թ.-գրում է Լ. Խաչիկյանը,-երկգարյա համառ. պայքարից հետո Մոսկվան թոթափում է Ոսկե Հորդայի նկամամբ ունեցած ըողոր հպասակային պարավորութիւնները և փաստորեն գառնում է հզոր մի միապետութիւն՝ ունենալով Իվան Գ-ի պես ականավոր առաջնորդ»<sup>3</sup>:

Մասենազրական ազրյուրների համաձայն՝ Մոսկվայի կիտայ-գորոգ արվարձանի Վառվառ (նախկին Վարակայա) թագամասում ազրել են հայեր և հուլներ<sup>4</sup>, ընդ որում «սուրոժցի վաճառականները» աակավին 14-րդ դարի վերջերին ունեցել են իրենց եկեղեցին<sup>5</sup>: Այսաեզ աշխասել են շինարար հայ վարպեաներ: Օրինակ՝ Սնգրոնիկյան Ս. Փրկիչ աաճարի (1427 թ.) գմրեթարգ ավագ խորանի զարգաքանգակները և որմնասյուրներից մեկի պրոֆիլավոր խարխիւր հայ ճարտարապետութիւնը հարագաա նմուշներ են<sup>6</sup>:

1552 թ. Իվան Ահեզր (1530-1584) գրավեց Ղազանի իշխանութիւնը: Ի նշանավորումն այդ հազթանակի՝ Մոսկվայի կենարոնում նա կառուցել է աալիս Վասիլի Երանելու աաճարը, ըազկացած ինը փոքրիկ եկեղեցիներից, որոնցից մեկը կոչվում է «Հայոց Լուսավորիչ Գրիգոր Պարթեի անունով»<sup>7</sup>:

Հայ առեարական կապիտալն աաաիճանարար ընգլայնում է իր ոլորաները. Մոսկվայում, Մեծ Նովգորոզում, Պուտիվլում<sup>8</sup> թանկագին քարերի, մորթիների, կաշվի և մոմի մեծ չափերի հանոզ առեառըն անցնում է հայերի ձեռքը<sup>9</sup>: 1660 թ. Սաահանից Մոսկվա է ժամանում Զաքար Շահրիմանյանը (Սահրատյանը) և ցար Ալեքսեյ Միխայլովիչին (1629-1676) ընծայարերում է հանրահուչակ «Սգամանգյա գահը» (աեա արձ. 243): Խոջա Զաքարը թագավորին խոսասնում է Զուգայից հայ վարպեաներ ուզարկել Ռուսաստան՝ շինարարական աշխասանքներ ծավալելու նպատակով: 1667 թ. Իրանից այստեղ է գալիս նաև Թանգրիվերան անունով հայազգի նկարիչը, որ ոուսաց միջավայրում պեաք է հայանի գառնար Իվան կամ Բոզգան Սալթանով անվամբ<sup>10</sup>:

Նույն թվականի մայիսի 31-ին Զուգահայ առեարական ըուրժուազիան ըանակցութիւնների միջոցով արտոնութիւն աաացավ առեառըր կաարելու ողջ Ռուսիայի աարածքում: Աաաիճանարար սկսվում է ձեավորվել հայոց գաղութը. Պրեսնյա թագամասում կառուցվում է Ս. Ասավաձաձին քարաչեն եկեղեցին<sup>11</sup>: Այսաեզ Գրուգլինի կոչվող վայրում, Վոսկրեսենսկայա

1 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 81:  
2 Նույն տեղում, էջ 78: Հմմտ. М. В. Фехнер, Торговля Русского государства со странами Востока в XVI веке, М., 1952, с. 61.  
3 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 77:  
4 М. Н. Тихомиров, Средневековая Москва, с. 158.  
5 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 82, 106: Հմմտ. М. Н. Тихомиров, ցզվ. աշխ., էջ 215:  
6 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 93:  
7 Նույն տեղում, էջ 83:  
8 М. В. Фехнер, указ. раб., с. 60-63.  
9 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 84:  
10 Նույն տեղում, էջ 93: Հմմտ. Нино Молева, Иван Салтанов и его школа. "Вестник общ. наук", 1977, № 10, с. 79, Նույնի՝ О художниках Бельских, "Вестник общ. наук", 1974, № 8, с. 38-52.  
11 Բարձրագույն հրովարտակք և արձանագրութիւնք վերարերեսայք առ եկեղեցիս դասանութեան լուսատրչակամ Հայոց, որ ի Ռուսաստան, Մ., 1842, էջ 119, Մ. Մաերեան, Յիշատակարան կեանց և գործոց մեծաանոց

Թագավորական կալվածում ապրում էին զգալի քանակով նաև Հայեր, որոնք Մոսկվա էին եկել մրաք Վախտանգ Զ Թագավորի հետ միասին՝ Պետրոս Բ-ի հրովարտակով<sup>1</sup>: Ստվարանում էր հուլյան վլադիմիր քաղաքի հայոց գաղթախը, որն ուներ իր կազմակերպված համայնքը և պայտամունքի կառույցը: Տեղեկություններ կան, որ 1753 թ. վերահիշյալ կիսայ-գորոզում հայերն ունեցել են եկեղեցի, որը հետագայում լքվել է՝ անդում արհեստագործական ձեռնարկություն հիմնադրելու պատճառով:

Ռուսահայ դադուլթն իր ծաղկումն ապրեց 18-19-րդ դարերում. Մոսկվան և Ս. Պետրբուրգը դարձան ոչ միայն անասական-մշակութային կենտրոններ, այլև քաղաքական ծրագրերի մշակման դարձնոցներ: Ապագայի նկատմամբ ունեցած մեծ հույսով ու հավատով՝ բազմաթիվ հայորդիներ իրենց կյանքը զոհեցին հանուն Ռուսիայի - հարավային և հյուսիսային պանդաղմաներում, Բորոզինոյի և Լայպցիգի ճակատամարտերում (անս արձ. 73, 285-286, 392):

1703 թ. Սանկտ-Պետրբուրգը համայն Ռուսիայի մայրաքաղաք հռչակվելուց հետո բազմաթիվ հայեր, ընդ որում աղնվական դասի ներկայացուցիչներ, անդափովեցին այսանդ: 1781 թ. հիմնադրվեց Գր. Խալդարյանի նշանավոր տպարանը, լույս տեսան առաջին դասադրքերն ու բառարանները (Կլ. Սարաֆյան), աշխուժացավ մշակութային կյանքը, բացվեցին նոր ուսումնական հաստատություններ: Հյուսիսում փայլաբանեց Ստ. Նաղարյանցի «Հյուսիսափայլ» ամսագիրը: Մեծ համբավ ձեռք բերեցին Բերովրե Պականյանը, Հովհաննես Սմիդին, Ներսես Ներսիսյանը, Գրիգոր Խալաթյանը, Մկրտիչ Էմինը, Մսեր Մսերյանը և շատ ուրիշներ:

Ռուսահայ դադուլթի հասարակական-քաղաքական հարարերությունների ոլորտում առանձնակի խոշոր դեր կատարեցին Նոր Զուղայից Ռուսաստան անդափոված Լաղարյան դերգասաանի ներկայացուցիչները: Մեծահարուստ արդյունարերող Աղաղարի որդիներ Հովհաննեսը (1735-1801), Մինասը (1737-1826), Խաչատուրը (1741-1771), Հովակիմը (1743-1826) և նրանց շառավիղները դարձան հայոց մշակույթի ու դպրութայն հովանավորներ<sup>2</sup>:

1815 թ. բացված Լաղարյան ճեմարանը համաշխարհային ճանաչում ձեռք բերեց իր բնարևելագիտության խոշոր կենտրոն: Նրա սերմերը ծլարձակվեցին Ռուսաստանի հարավում՝ Հյուսիսային Կովկասում և այլուր:

18-19-րդ դարերում Մոսկվայում դործում էին երեք հայկական եկեղեցիներ.

1. Սուրբ Խաչի վերացման (Крестовоздвиженская церковь)-1779 թ.

2. Սուրբ Ասավածածին (Церковь Пресвятой Богородицы),

3. Սուրբ Հարություն՝ Հանդսարանի եկեղեցի (Воскресенская армянская церковь), կառուցված 1815 թ. Լաղարյան եղբայրների միջոցներով<sup>3</sup>:

Պրակում դեանդված են Ա. Հարություն եկեղեցու ներսում և շրջակա դերեզմանոցում եղած

<sup>1</sup> Պայազատաց Լաղարեան տոմսի, Մ., 1856, էջ 18:

<sup>2</sup> Լ. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում, էջ 87:

<sup>3</sup> Տես Վ. Դիլոյան, Լաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, Ծուշ. Խաչիկյան, Լաղարյանների սուկարակում ընկերությունը 18-րդ դարի 40-50-ական թթ. «Լրարեր հաս. գիտ.», 1981, գո. 7, էջ 79-88, հմմտ. Մ. Մսերեանց, Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն Պայազատաց Լաղարեան տոմսի, մասն Բ, Մ., 1856, Յարութիւն Տէր-Յովհաննիսեանց, Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱսպահան, հ. Ա, Նոր Զուղա, 1880: Տես նաև՝ Կ. Չերնյավսկայա Կ истории возникновения капиталов и горнозаводского хозяйства Лазаревых "Истор. записки", N 105, М., 1980, с. 273-279.

<sup>3</sup> Տես Հարիւրամեակ կենարար Սուրբ Խաչի վերացման Մոսկվայի Հայոց եկեղեցւոյն, կառուցելոյն 1779 թ. Բրիտոսի և Հայոց ՌԹԻԸ, աշխատասիրութեամբ ա. Յակոբայ Սուրենեանց, Ռոստով (Դոմի վերաւ), տպարան Յովհաննես Տէր-Արրամեանց, 1879-ՌԹԻԸ:

բոր որ այն վիճազրերը, հիշատակագրերը, որոնք կարևոր արժեք են ներկայացնում ուսուսակայ գաղթօջախների պատմութեան համար:

### ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Գտնվում է Մակեևի փողոցի վրա (N. 13), Վազանկովյան գերեզմանոցի դիմաց, հայոց հանգստարանի տարածքում: Գործող է. աթոռանիստն է ուսուսակայոց թեմի: Կառուցվել է 1815 թ. Լազարյան եղբայրների ծախսով (ճարարապետ՝ Մ. Յելտեն): Հաասակին եղել են Լազարյան աղագատոհմի հանգուցյալների աապանաքարերը, որոնց մեծագույն մասը բարրարոսարար ոչնչացվել է 2-րդ Համաշխարհային պաաներազմի տարիներին: Ներկայումս եկեղեցու հատակը ծածկված է ցեմենտ-րետոնի հասա շերտով: Ընգառաջելով մեր խնգրանքին՝ ուսուսակայոց թեմի առաջնորդ Տիրան վարդապետ Կյուրեղյանը (այժմ՝ արքեպիսկոպոս) թույլ տվեց ուղեգորգերը հանել և մեկ անգամ ևս ուշադիր ղնեել եկեղեցու գետնամասը. հյուսիսային խորանի գիմաց հայտնարերվեց դեղնավուն կրաքարից կերաված ընգամենը մեկ աապանաքար, (1,55x1 մ), որի տառերի ակոսիկները լցված էին հողախառն մոմի պիրկ ձուլվածքով:

Արձանագրութեունը մաքրելուց հետո ընթերցվեց.

1. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՎԵՀԱԶՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԹՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑ / ԾՆԵԱԼ Ի 16 ԱՊՐԻԼԻ 1774 ԵՒ ՀԱՆԳՈՒԹԵԱԼ Ի ՔՐԻՍՏՈՍ 26 ՄԱՅԻՍԻ 1846 ԱՄԻ:

2. Ապտ՝ ոուսերեն 3 տող.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ ВОЯРИНА/ ИВАНА ИВАНОВИЧА АРАПЕТОВА./ РОДИЛСЯ 16 АПРѢЛЯ 1774 ГОДА, СКОНЧАЛСЯ 26 МАЯ 1846 ГОДА.

Ծանոթ. Հայրապեայանները ծաղումով Դիղակի Մելիք-Եզանյանների աոհմից էին: Մելիք-Ավանի մահվանից հետո նրա կին Գոհար աիկինը աեղափոխվում է Ռուսասան: Մելիք-Ավանի և նրա եղորո ժառանգներից «առաջ եկան իշխան Ամրայանները, իշխան Մելիքովները և Հայրապեայանները, որոնք ... Աստրախանում, ԱՊեանբուրգում և Մոսկվայում նշանավոր պաշտոնների մեջ մասան», - գրում է Բաֆֆին (Նամսայի մելիքութեունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 191): Հայրապետայանների մաերիմ բարեկամն էր ոուս ականավոր գրող Ի. Ա. Տուրգենևը (տես Вратская помощь пострадавшим в Турции армянам, изд. 2-е, М., 1898, с. 334).

3. Հուշատախտակ պղնձյա թիթեղից: Այժմ ագուցված է եկեղեցու ներսում, աջակողմյան պատին: Վրան հայերեն և ոուսերեն փորագրված է.

ԿԱՌՈՅԱԻ ՏԱՃԱՐ ՅԵԱՌԵ ՅԱՌԲԵՒՄ ԾԱՌԵՐԵՎԵԱՇՏՈՆ ԱՆՑ ԵՐԿՈՑԵՎԵՑ ՄԻԱՍԱՅ Ե ԹՈՒՎԵՑ ԵՊԱՋԱՆԵԱՑԻՄՇՏԵՆԵԱՆՑ ԶԻՀԱՏԱԿ ԻՆՔԵԱՆՑ Ե՛ ԱՄԵՆՍՅՆ ԱՐԵՆԱԿՅԱՑ ԻՌԵՆԵՑ ԶԱԻՏԵԱ ՌԵ 1815 Ե՛ ԻՅՈՒՆԻՍԻ Ի՛ՄՕՍԿՈՎ ՀԱԻԱԳԱՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ

ԿԱՌՈՒՑԱԻ ՏԱՃԱՐՍ ԹԱՆՈՒՆ ԹԱՐՈՒԹԵԼԱՅԻՆ ՔՍԻ ԾԱԽԻԻՔ ԲԱՐԵՊԱՇՏՈՆ ԱՐԼԱՅԻՑ/ԵՐԿՈՒԹ ԵՂԲԱՐՑ ՄԻՆԱՍԱՅ ԵՒ ԹՈՎԱԿԻՄԱՅ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԵ Ի ՄՇՏԵՁԵՆԱԿԱՆ/ԹԻՇԱՏԱԿ ԻՆՔԵԱՆՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԵՆԱԿՅԱՑ ԻՒՐԵԱՆՑ / ԹԱՄԻ ՏԵԱՌՆ 1815 ԵՒԻ ԹՈՒՆԻՍԻ 1 Ի ՄՕՍԿՈՎ ՀԱԻԱԳԱՀ/ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ:

Храмъ сей сооруженъ во имя воскресенія Христова иждивеніемъ благочестивыхъ мужей двухъ братьевъ Мины и Якіма Лазаревичевъ Лазаревыхъ въ вѣчную память ихъ и всѣхъ кровныхъ своихъ въ мѣсто Господне 1815 ЮНІА 1<sup>го</sup> дня въ персональной спомощи Москвитъ

Ապա՝ ոուսերեն 6 տող.

ХРАМЪ СЕЙ СООРУЖЕНЪ ВО ИМЯ ВОСКРЕСЕНІЯ ХРИСТОВА ИЖДИВЕНІЕМЪ БЛАГОЧЕСТИВЫХЪ МУЖЕЙ/ ДВУХЪ ВРАТЬЕВЪ: МИНЫ И ЯКИМА ЛАЗАРЕВИЧЕВЪ/ ЛАЗАРЕВЫХЪ ВЪ ВѢЧНУЮ ПАМЯТЬ



ИХЪ ВСЪХЪ/ КРОВНЫХЪ СВОИХЪ ВЪ ЛЪТО ГОСПОДНЕ 1815-ГО ИЮНЯ/ 1-ГО ДНЯ  
ВЪ ПЕРВОПРЕСТОЛЬНОЙ СТОЛЪЦЪ МОСКВЪ.<sup>1</sup>

Լուսանկ. 1

4. Եկեղեցու բարուկի վրա, ներքուստ, շրջանաձև.  
ԵԿԱՅՔ ԱՌ ԻՍ ԱՄ[ԵՆԱՅՆ] ՎԱՍՏԱԿԵԱԼՔ ԵՒ ԲԵՌԵԱՒՈՐՔ ԵՒ ԵՍ ՀԱՆԳՈՒՑԻՑ ՋՁԵՁ:

### ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՁՄԱՆՈՑ

5. Դամբարան-կոթող, զորչավուն ավաղաքարից, քառակող, ըրդաձև: Միջնամասում  
քանդակված են թեավոր հրեշտակներ, արևելյան կողին՝ սափոր ծաղկեփնջով: Հարավային  
կողին ոտմրաձև քանդակ է, որի մեջ եղած սալաքարը պահպանված չէ: Պատվանդանի  
արևմտյան մասում կերտված է բուսական զարդերով խորանիկ: Հյուսիսային սալաքարին՝ 15  
տող.

Յ+Ք/ ՍՈՅ ԴԱՄԲԱ/ՐԱՆ ՂԵԹԵՒԱՆ ԿՈ/ՁԻ  
ԱՋՆԻԻ Թ[Ո]/ՌԱՆ/ ԻՎԱՆԻՁԻ  
ԲԱԺԱԿՆ ԷԱՌ/ ՄԱՆԿԱԿԱՆԻ,  
ԱՄՕՔ ԵՐԷՔ ԸՆԴ/ ԵՐԵՄՆԻ,  
ՍԱ Ի ԹԻՓԼԻՁ ՔԱՂԱՔ/ ԾՆԱՆԻ,  
Ի ՆԱՀԱՆԳԻՍ ԳԱՅ ԺԱ/ՄԱՆԻ  
ՎԱՃԱՌԱԿԱՆ ԸՍՏ ԿԱՆՈՆԻ./  
ԵԿԱՑ ՎԱՐՈՒՔ ԱՌԱՔԻՆԻ,  
ՈՐԲՈՑ, ՏՆԱՆԿԱՑ ՕԳՆԻՁ ԳՏԱՆԻ  
ՄԻՆՁ ՑՍԱՀՄԱՆ ՏԻՐԱԿԱՆԻ.  
ԵԹՈՂ ՋԱՄ...ՋԿՆԻ  
ԳՆԱՑ Ի ՏՈՒՆԸ/ ՑԱԻՏԵՆԻ,  
ԱՐԴ ՀԱՆԴԻՊՈՂՔ Ի ՍՈՅՆ ՇԻՐՄԻ՝/  
ՄԵԿ ՀԱՅՐ ՄԵՐԻԻ/ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ:  
1814 ԱՄԻ ՄԱՅԻՍԻ 1/ՄՕՍԿ/ՎԱ:


Մանրթ. Արձանադրությունը վկայում է, որ հանդուցյալը Իվան Իվանիչ (Հովհաննես  
Հայրապետյանց «Վեհադնի» թոռն է: Ցավոք, բնադրի հատկապես միջնամասը քայքայ-  
ված է, թեև անխաթար է բովանդակությունը:

6. Տապանաձև, կարմիր դրանիտից, դադաղաձև: Հյուսիսային կողին՝ 3 տող.  
ԱՅՍ ՏԱՊԱՆԱԿԻ ՄԷՁ ԱՄՓՈՓՎԱԾ Է ՄԱՐՄԻՆԸ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՍԵՑԻ ԱԲՐԱՀԱՄՈՒ  
ՄԱՀՏԻՍԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ/ ԽԱԼԱԹԵԱՆՑ, ՈՐ ԾՆԱԻ 1824 ԹՈՒԱԿԱՆԻՆ 25 ՕԴՈՍՈՍԻՆ/ ԵՒ  
ՀԱՆԳԵԱԻ Ի ՏԷՐ 1866 ԹՈՒԱԿ. 1 ՍԵՊՏ.

Արևելյան կողին՝ 8 տող.

ԹԷ ԲԱՐԵԿԱՄՔ, ՁԵՁ ՊԱՏԱՀԻ  
ԱՅՑԵԼ ԱՆԵԼ ԳԵՐԵՁՄԱՆԻՍ,  
ՑԻՇԵՑԷՖ ԴՈՒՔ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ  
ԱՆՀԱԻՍԱՐ ԿԵԱՆՔ - ԿԵԱՆՔ ԱՆԲԱՂԴԻՍ:  
ՄԱՀ ԵՒ ԿՈՐՈՒՍՏ ՄԵՁ ՍԵՊՀԱԿԱՆ,  
ՍԱՀՄԱՆ ՄԱՐԴՈՑ Է ՄԵՌԱՆԵԼ,  
ՍԱԿԱՅՆ Ի ՄԷՁ ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ  
ՔԱՆ ԱՄԵՆ ՄԱՀ Է ԱՌԱԻԵԼ:

<sup>1</sup> А. Базиянц, Р. Мартиросян, Обелиск, Ереван, 1993, с. 33.



Ծանոթ. Ռուսերեն արված է հիշատակագրութեան մասը:

7. Տապանաքար սե. գրանիտից, վրան խաչ: Հյուսիսային կողին՝ 4 սող.

Գեորգ Գրիգորեան ԽԱԼԱԹԵԱՆՑ/ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՑԻ/ Ծն. 1835 ԱՄԻ, ՀԱՆԳԵԱԻ Ի ՏԷՐ/22 ՕԳՈՍՏՈՍԻ 1905 ԱՄԻ:

Արեւելյան կողին՝ Աշուղ Զիվանու աղերն են.

ԱՇԽԱՐՀՍ ՀԻՒՐԱՆՈՑ Է, ՄԱՐԴԻԿԸ ՀԻՒՐ ԵՆ,  
ՈՐՊԷՈ ՅԱՃԱԽՈՐԴ ՇԱՐՈՒԷՇԱՐԱՆ  
ԿՈՒԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ:

ՋԻՎԱՆ[Ի]

Լուսուցի. 2

8. Ապա՝ ուսերեն 5 սող.

ЕГОРЪ ГРИГОРЬЕВИЧЪ /ХАЛАТОВЪ/ ИЗ Г. АЛЕКСАНДРОПОЛЯ,  
ЭРИВ[АНСКОЙ] ГУБ[ЕРНИИ]/ РОДИЛСЯ ВЪ 1835 ГОДУ,/ СКОНЧАЛСЯ 22 АВГУСТА  
1905 Г.

9. Տապանաքար սե մարմարից, դադաղաձև, հյուսիսային կողին՝ 3 սող.

ԸՆԴ ՎԻՄԱԽՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԱՍՏՐԱԽԱՆԱՐՆԱԿ ԳԱՐԻԷԼԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆՑ./ՎԱԽՃ. Ի 12 ՄԱՅԻՍԻ 1873 ԱՄԻ Ի ՀԱՍԱԿԻ 33 ԱՄԱՑ:

Նույնը՝ ուսերեն, սակայն

ГАВРИИЛЪ АЛЕКСАНДРОВИЧЪ АЛЕКСАНДРОВЪ.

10. Կոթոն սե գրանիտից, վրան՝ 6 սող.

ԸՆԴ ՎԻՄԱԽՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ԱՍՏՐԱԽԱՆԱՅ ՀԱՅԱՋՆԻՈՅ / ՅԱՐՈՒԹԻՒՆԻ  
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ / ՄԱԼԱՖԵՅԵԱՆՑ./ ԾՆԵԱԼ Ի 10 ՄԱՐՏԻ 1808 ԱՄԻ / ԵՒ ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 6  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1872:

Այնուհետև՝ ուսերեն 4 սող. ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ

АСТРАХАНСКАГО АРМЯНИНА /АРТЕМИЯ ИВАНОВИЧА/ МАЛІАФЪЕВА (Շարունակութունը՝  
ինչպես հայերենում):

11. Կոթոն սե մարմարից. կտր կիսասյուն, վերից և վարից քառակուսի պատվան-  
գաններով, վրան՝ 6 սող.

Ի ՏԱՊԱՆԻՍ ՅԱՅՄԻԿ ԱՄՓՈՓԵԱԼ ԿԱՅ / ՄԱՐՄԻՆ ՄՈՍԿՈՎՅԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ / ՍԱՂԱԹԻԷԼ  
ՊՕՂՈՍԵԱՆ ՍԱՂԱԹԻԷԼԵԱՆՑ, ՈՐ/ԾՆԱԻ Ի 1797 ԱՄԻ Ի 15 ՓԵՏՐՎԱՐԻ, / ՀԱՆԳԵԱԻ Ի ՔՐԻՍՏՈՍ  
Ի 19 ՓԵՏՐՎԱՐԻ 1840 ԱՄԻ, / Ի ՀԱՍԱԿԻ ԻՐԻ 43 ԱՄԱՑ:

12. Ապա՝ ուսերեն տարրերակը.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ МОСКОВСКАГО КУПЦА/ САВЕЛИЯ  
ПАВЛОВИЧА САВЕЛІЕВА.. շարունակութունը՝ ինչպես հայերեն ընագրում և՛ ГОСПОДИ,  
ПРИИМИ ДУХЪ МОИ СЪ МИРОМЪ ԸՆԿԱԼ ՏԷՐ ՋՀՈԳԻ ԻՄ Ի ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ:

13. Տապանաքար սե գրանիտից, մեծ չափսի, վրան թեալոր խաչ և 5 սող.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ԱՆՆԱՅԻ ԹԱԴԷՈՍԵԱՆ / ՎԼԱՍԵԱՆՑ / ՎԱԽՃԱՆԵԱԼ 5 ՅՈՒՆԻՍԻ 1913  
ԱՄԻ /84 ԱՄԱՑ:

Նույնը՝ ուսերեն, միայն

АННА МАТВѢВНА/ ВЛАСОВА.

14. Տապանաքար նույնափայ, ավելի նեղ, վրան 5 սող.

ԱՍՏ Է ՏԱՊԱՆ / ՄԱՐԻԱՄԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ / ԱԼԷԽԻԱ / ՎԱԽՃԱՆԵԱԼ Է 1903 Ք. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29 / 61 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ:

*Նույնը ուուսերեն, սակայն*  
МАРИЯ ГРИГОРЬЕВНА АЛ'ЬЕВА.

15. Կոթող սև գրանիտից, միջին խորանի մեջ՝ 1 տող.  
«ՏԷՐ. ԸՆԿԱԼ ԶՀՈԳԻ ԻՄ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ»

Ապա՝ 7 տող.  
ԸՆԴ ՎԻՄԱԻ ՏԱՊԱՆԻՍ / ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ԾԱՂԻԿ ՏԻԿԵՈՋ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ / ՍԱՀԱՐԲԷԿԵԱՆՅ / ՈՐ ԾՆԵԱԼ Ի 22 ՅՈՒՆԻՍԻ 1824 ԱՄԻ, / ՎԵՐԱՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՏԷՐ Ի 19 ՄԱՅԻՍԻ / 1865 ԱՄԻ:

16. Այնուհետև ուուսերեն.  
ГОСПОДИ. ПРИМИ ДУХЪ МОЙ СЪ МИРОМЪ / ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ / ПРАХЪ ПОТОМСТВЕННОЙ / ПОЧЕТНОЙ ГРАЖДАНКИ / ФЕОДОСИ ИВАНОВНЫ / САРБЕКОВОЙ. (շարունակ. ինչպես հայերենում).

17. Կոթողի հարավային կողմին՝ մեկ քառյակ.  
ՀԱՅԵԱՑ ՅԱԹՈՒՈՅԴ ՅԱՅՍ ԽՈՆԱՐՀ ՇԻՐԻՄ,  
ՈՒՐ ՄԱՀՈՒԱՆ ԱՐԿ ԶԻՍ ՎՃԻՌ ՈՒԵՐԻՄ,  
Ի ԶԱՅՆ ՍՈՒՐԲ ՓՈՂՈՑ ՅԱՐՈՂ ԶԻՍ ԱՍՏՈՒԱՄ,  
ՄՈՅԾ ԸՆԴ ԻՄԱՅՆՈՑ Ի ՅԱՐԿ ՔՈ ՓԱՌԱՑ:

18. Տապանաձևար սպիտակ մարմարից, դադազաձև, վրան ըուսական զարդերով խաչ.  
Հարավային կողմին՝ 5 տող.

ՅՈՅՍ ՄՈՎՍԻՍԵԱՆ / ՅՕՆ-ԲԼԷԽ / Ի ՏԱՆԷ ՍԱՀԱՐԲԷԿԵԱՆՅ / 22 ՅՈՒՆԻՍԻ 1884 ԱՄԻ-27 / ՅՈՒՆՈՒԱՐԻ 1908 ԱՄԻ:

Ատորե՝ ուուսերեն.  
НАДЕЖДА МОИСЕЕВНА / ФОНЪ-ВЛЕХЪ / УРОЖДЕННАЯ СААРБЕКОВА (շարունակ. ինչպես հայերենում).

19. Կոթող. եղծված է անուկ-ազգանուկ, հարավային կողմին՝ 4 տող.

Ա՛Խ, ՈՎ ԱՆՑԱՒՈՐ ԱՇԽԱՐՀ ՅԱՅՍ ԱՆԽՕՄ՝  
ՕՏԱՐ ԿԱՄ ԾԱՆՕԹ ԵՂԲԱՅՐ Ի ՔՐԻՍՏՈՍ,  
ՇԱՐԺԵԱՑ Օ՛Ն, Ի ԳՈՒԹ ԱՆԲԱՂԴ ԽԵՌԵԼՈՅՍ,  
ԿԱՐԴԱ ՄԻ ԲԵՐԱՆ «ՈՂՈՐՄԵԱ ՀՈԳԻՈՅՍ»:

20. Կոթող սև գրանիտից, ծայրամասում երկտեղյա խաչ, հարավային կողմին՝ 4 տող.  
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՄՈՎՍԻՍԻ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱ / Ն ՍԱՀԱՐԲԵԿՈՎԱՑ ԱՍՏՐԱԽԱՆՑԻՈՑ,  
ՈՐ / ԾՆԱԻ Ի 1792 Ի 10 ՓԵՏՐՎԱՐԻ ԵԻ ՀԱՆԳԵԱԻ Ի ՔՏ / Ի 9 ՍԵՊՏ. 1839 ԱՄԻ Ի ՄՈՍԿՈՎ:

21. Ապա՝ ուուսերեն 5 տող.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ / ВРЕМЕННОГО МОСКОВСКАГО КУПЦА / МОИСЕЯ АРТЕМЬЕВИЧА / САРБЕКОВА. ДНЯ ЖИТІЯ ЕГО ВЫЛО 47 ЛѢТЬ.

22. Նույն կոթողի հյուսիսային կողմին՝ 8 տող.

ԶԻՔ ԱՑԼ ԻՄ ՅԵՐԿՐԻ ՄԽԻԹԱՐՈՒԹԻԻՆ,  
ՀԱՆԳՈ ՎԱ[ՅՐ] ԵՐԿԻՐ ԴՈՒ ԻՄ ՄԽԻԹԱՐ,  
ՈՒՐԱՑԱԻ ԶԻՍ ՆԱ-ՀՈԳԻՍ ԿԵՆԱՐԱՐ,  
ԶԱՅԼ ՈՔ ՍԻՐԵԱՑ ՆԱ ՅԷԻՆ ՏԱՐԱԻ ՏՈՒՆ,  
ՈՉ ԹՈՂՑԷ ՆԱ ԶԻՍ, ՆՈՐԱ ԻՄՍ ԿԷՍ,

ԱՌ ՔԵՁ Ի ՊԱՀԵՍՏ ԵԿԻ ՄԱՅՐ ԲԱՐԻ.  
ԵԿԵՍՑԷ ԱՐՔԱՅ-ՅԱՐԵԱՅՑ Ի ՀԱՆԴԷՍ,  
ՄԻԱՑՈՅՑ ԸՆԴ ԵԱ-ԵԻ ԻՆՁ ԵՐԱՆԻ:

*Արեմայան կողին՝*

ГОСПОДИ, ПРИМИ ДУХЪ МОИ СЪ МИРОМЪ.

*23. Տապանաբար սև գրանիտից, վրան խաչ, որի ներքևում 7 առդ.*

Ի ՅԻՇԱՏԱԿ /ՄԱՐԻԱՄ ՍԻՄՕՆԵԱՆ/ ԽԱԼԱԹԵԱՆՑ/, ՎԱԽՃԱՆԵԱԼ /1883 ԱՄԻ/ Ի 25 ՄԱՅԻՍԻ /ՄՈՍԿՈՒԱ:

*Հյուսիսային, արևելյան և հարավային նիստերին՝ 4 առդ.*

МАРИЯ СЕМЕНОВНА ХАЛАТОВА /, УРОЖДЕННАЯ СААРБЕКОВА/ РОД. ВЪ 1853  
ГОДУ. СК. 25 МАЯ 1883 ГОДА.

*24. Կոթոյ կարմրավուն գրանիտից, վրան՝ 4 առդ.*

ԵՂԻՍԱԲԷԹ ԳԷՈՐԳԵԱՆ /ԱՐԳԱՐԵԱՆՑ./ ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 2/ ԱՊՐԻԼԻ 1906 ԱՄԻ Ի ՀԱՍԱԿԻ 84  
ԱՄԱՑ:

*Նույնը ոռևերեն. միայն՝*

ЕЛИЗАВЕТА ЕГОРОВНА АВКАРОВА.

*25. Տապանաբար կարմիր գրանիտից, վրան խաչ, որի ստորե՝ 3 առդ.*

ԳԱՅԻԱՆԷ ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ/, ՎԱԽՃԱՆ. 17 ՀՈԿՏ. / 75 ԱՄԱՑ:

*Հյուսիսային կողին՝*

ТАТЬЯНА ИВАНОВНА ИВАНОВА, շարունակ. ինչպես հայերենում:

*26. Կոթոյ գորշ գրանիտից, պապանդանի վրա՝ 7 առդ.*

ДВОРЯНИНЪ ИВАНЪ МАКАРОВИЧЪ /КАЛУСТОВЪ/ И СУПРУГА ЕГО/ ЕЛИЗАВЕТА  
ОСИПОВНА/ РОЖДЕННАЯ КАРХАНОВА/ СКОНЧАЛИСЬ 14 ФЕВР. 1846Г./ И 20  
АПРЕЛЯ 1852 Г.

*27. Կոթոյ գորշ գրանիտից, քառակող, արևելյան կողին՝ 6 առդ.*

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ/ПОГРЕБЕНО ТЪЖЛО МОСКОВСКАГО КУПЦА/ КАЛУСТА  
ОСИПОВИЧА/ КАРИВОВА/ СКОНЧ. 1882 Г. ДЕКАБРЯ 19 ДНЯ/ 72 ЛѢТЬ.

*28. Կոթոյ սև գրանիտից, պապանդանի հյուսիսային կողին՝ 6 առդ.*

ԸՆԴ ԱՅՍՈՒ ՎԻՄԱԻ ՀԱՆԳՁԻ ՄԱՐՄԻՆ ՎԱՃԱ./ՌԱԿԱՆԻՆ ՄՈՍԿՈՎՈՒ ՊԵՏՐՈՍԻ  
ԿԻՐԱԿՈՍԵԱՆ/ՍԱԴՈՎՆԻԿՈՎԻ./ ՈՐ ՀԱՆԳԵԱԻ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԱՄԱՑ/ ՀԱՍԱԿԻ  
ԻԻՐՈՅ, ՅԱՄԻ ՏՆ 1847/ Ի 26 ՅՈՒԼԻՍԻ:

*29. Հակառակ կողին՝ ոռևերեն 6 առդ.*

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ/ МОСКОВСКАГО КУПЦА ИЗЪ АРМЯНЪ/  
ПЕТРА КИРИЛОВИЧА САДОВНИКОВА, СКОНЧАВШАГОСЯ [В] 1847<sup>ОМ</sup> ГОДУ/ ПОЛЯ  
26<sup>О</sup> ДНЯ/ ОТЪ РОДУ ЖЕ ЕМУ ВЫШО 70 ЛѢТЬ.

*30. Կոթոյ սև գրանիտից, ծաղկամանի ձևով, հյուսիսային կողին՝ 7 առդ.*

ՀԱՆԳՈՒՅԵԱԼԱ ԱՅՍ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՖԻ/ՅԵՐ ՍԱՐԳԻՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԳԱԼԸՍ/ ՏԵԱՆ Ի  
ՏՈՀՄԷՆ ԲՕՐԱՂԱՆԵԱՆՑ/, ԾՆԵԱԼ Ի ՂԶԼԱՐ Ի 1/ ՅՈՒՆՎԱՐԻ Ի 1806 ԱՄԻ/, ՓՈԽԵՑԱԻ ԱՌ  
ՏԷՐ Ի ՀԱՍԱԿԻ ԻՐԻԵԻ 37 ԱՄԱՑ Ի 1 ՅՈՒԼԻՍԻ, 1841 ԱՄԻ/. ԸՆԿԱԼ ՏԷՐ/, ԶՀՈԳԻ ԻՄ Ի  
ԽԱՂԱՂՈՒԹԻՆ:

*31. Արևելյան կողին՝ 6 առդ.*

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОГРЕЕНО ТЪЛО КИЗЛЯРСКАГО ИЗЪ ДВОРЯНЪ  
ПРАПОРЩИКА/ СЕРГѢЯ ИВАНОВИЧА/ КАЛУСТАГО-БОРАГАНЦОВА/ РОДИВШАГОСЯ  
ВЪ 1806 Г. 1 ГЕНВАРЯ,/ СКОНЧАВШАГОСЯ ВЪ МОСКВѢ 1 ИЮЛЯ 1841/Г. ЖИТІЯ ЕГО  
БЫЛО 36 ЛѢТЪ И 6 МЦОВЪ.

32. Հարավային կողմն՝ 10 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՄԱՐՄԻՆ ԱԶՆՈՒԼԿԱՆԻ,  
ՈՐ ՍԻՐԵԱՑ ԶԱՍՏՈՒԱԾ Ի ԿԵԱՆՍ ԻՒՐ ՀԱՄԱՌԻՆ  
ԵԼԻՑ ԶԻՒՐ ԸՆԹԱՑՍ ԵՒ Ի ԶԱՅՆ ՀԱՍՏԶԻՆ,  
ՓՈՒԵՑԱԻ Ի ԴԱՍՍ ԱՐԴԱՐՈՑ ՎԵՐԻՆ  
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻ՝  
ՊՍԱԿԵԱԼ Ի ԿԱՅԱԵՐԷ ԱՍՏ ՅԵՐԿՐԻ,  
ԶԻ ԾԱՌԱՅ ԷՐ ՍԱ ՏԵԱՌՆ ՀԱԻԱՏԱՐԻՄ  
ԸՍՏ ԻՒՐՈՑ ԱՐԴԵԱՆՑ ԱՌ ԽՈՅՐ ՊՍԱԿԻ,  
ՈՎ ԶԻՒՐԴ ՔԱՂՑՐԻԿ ԲԱՐՔԱՌ ՀՐԵՇՏԱԿԻՆ  
ՑԱՐՈՒՍՑԷ ԶՍԱ ՅԱԻՈՒՐՆ ՎԵՐԶԻՆ:

33. Տապանաքար ստիտակ մարմարից, գերեզմանոցի հյուսիսային մասում, վրան խաչ,  
ստորև՝ 5 տող.

ՈՒՍՈՒՑԶԱՊԵՏ-ՀԱՅԱԳԷՏ / ԿԱՐԱՊԵՏ/ ԿՈՍՏԱՆԵԱՆ / ԾՆ. 14-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1849 Թ /, ՎԱԽՃ.  
1-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1920 Թ.

Մանթ. Ականավոր հայագետ, մանկավարժ Կ. Կոստանյանը ծնվել է (ըստ ՀՄՀ-ի՝ 1853թ.)  
Ալեքսանդրապոլ քաղաքում: Սովորել է Պետերբուրգի կայսերական համալսարանի  
արևելյան լեզուների ֆակուլտետում: Աշխատել է իրրե ուսուցիչ էջմիածնի Գեորգյան  
ճեմարանում(1878-1883, 1885-91), ապա որպես տեսուչ Թիֆլիսի ներսիսյան դպրոցում  
(1891-1894) և զարձյալ Գեորգյան ճեմարանում (1894-1899, 1902-1905): 1911-1920  
թթ. իրրե տեսուչ և գասախոս է եղել Մոսկվայի Լազարյան ճեմարանում: Թողել է  
հարուստ գրական ժառանգություն (մասամբ անտիպ). կազմել է գրարարի գասագրքեր,  
հրատարակել է ըրդմաթիվ ուսումնասիրություններ Գրիգոր Մազիսարոսի, Ստեփանոս  
Օրբելյանի, Գրիգորիս Ազիզամարցու, Մկրտիչ Նազաչի, Հակոբ Կարնեցու և այլոց մասին:  
Նրա գրչի արգասիք է «Վիմական տարեգիրը», որ լույս տեսավ 1913 թ. Պետերբուրգում  
ն. Մառի ուսերեն ընդարձակ առաջարանով (տես ՀՄՀ, հ. 5, Երեան, 1979, էջ 620):

Լուսանկ. 3

34. Տապանաքար սև գրանիտից, նախորդից շուրջ 3 մ դեպի աջ: Վրան ուռուցիկ խոշոր  
տառերով՝ 4 տող.

ԳՐԻԳՈՐ ԱԻԵՏԻՔԵԱՆ / ԶԱՆՇԵԱՆՑ /, ԾՆ. 17 ՄԱՅԻՍԻ 1851 ԱՄԻ /, ՎԱԽՃ. 17 ՅՈՒԼԻՍԻ 1900  
ԱՄԻ:

Ապա՝ ուսերեն նույնպես 4 տող.

ГРИГОРИЙ АВЕТОВИЧЪ/ ДЖАНШИЕВЪ/, РОД. 17 МАЯ 1851 ГОДА,/ СКОНЧ. 17 ИЮЛЯ  
1900 ГОДА.

Մանթ. Մեծանուն հրատարակախոս և լրագրող Գրիգոր Զանչյանցը (Զանչիե.) ծնունդով  
Թիֆլիսից էր: Տեղափոխվելով Մոսկվա՝ սովորել և ավարտել է Լազարյան ճեմարանի  
գիմնազիան, ապա՝ Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (1874 թ.):  
Նրա սշխատություններից առավել հայտնի է «Մեծ ունիորմների գտնաբերումը» պատմա-  
հրատարակախոսական ուսումնասիրությունը: «Հայկական հարցը Թուրքիայում»  
գրքույկում (1893 թ.) նա շեշտում է. որ Հայկական հարցը պեաք է լուծել... «իրավունքի,  
արդարության, մարգասիրության պահանջների համաձայն»: 1895-1896 թթ. հայեան  
գոտորածների կապակցությամբ նախաձեռնել, կազմել և հրատարակել է «Եզրայրական  
օգնություն Թուրքիայի տառապող հայերին» երկհատորանոց աշխատությունը (1897-

1898 թթ.), որտեղ հանդես են եկել մի շարք անվանի ուսու մտավորականներ:

Գր. Ջանշյանցը «Ռուսկիե վեդոմոստի» թերթի հրատարակիչ-խմբագիրներից էր: Գրել է ուսերեն (տես Հ. Ս. Հ., հ. 9, էջ 477, տես նաև «Իրան-Նամե» 1997, N3 - ակադ. Գ. Ղարիբջանյանի հոդվածը):

Լուսանկ. 4

### Խալաթյանների տոհմական դամբանատուն

35. Տապանաճար, սև գրանիտից, շրջափակված երկաթե ձողերով, վրան՝ 4 սող.  
ԿԻՐԱԿՈՍ ԲԱՆՇԵԱՆ /ԽԱԼԱԹԵԱՆԵՑ./ ՎԱԽՃԱՆՈՒԵԾ Ի ՄՈՍԿՈՒԱ./ 27-ԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1910Թ.

Հարավային կողին՝ 2 սող.

НИКОЛАЙ ВОРИСОВИЧЪ/ХАЛАТОВЪ/

Հյուսիսային կողին՝ նույնպես 2 սող.

РОД. 3 ЯНВАРЯ 1851 ГОДА./ СКОНЧ. 27 ОКТЯБРЯ 1910 ГОДА.

36. Տապանաճար, նույնատիպ: Վրան՝ 5 սող.

Ի ՅԻՇԱՏԱԿ /ՄԵՀՐՈՒԺԱՆ / ԲԱԽՇԵԱՆ./ ԽԱԼԱԹԵԱՆԵՑ / ՎԱԽՃԱՆԵԱԼ / 1903 ԱՄԻ Ի 4 ՄԱՐՏԻ / ՄՈՍԿՈՒԱ:

Հյուսիսային կողին՝

МИРОНЪ БОРИСОВИЧЪ ХАЛАТОВЪ

Հարավային կողին՝

РОД. 7 ФЕВР. 1846 Г., СКОНЧ. 4 МАРТА 1903 Г.

37. Տապանաճար նույնատիպ. վրան՝ 7 սող.

Ի ՅԻՇԱՏԱԿ / ԿԵԿԷԼ / ԽԱԼԱԹԵԱՆԵՑ./ ՎԱԽՃԱՆԵԱԼ / 1907 Թ./ 10 ՅՈՒԼԻՍԻ / ՄՈՍԿՈՒԱ:

Հյուսիսային կողին՝

СКОНЧАЛАСЬ 10 ИЮЛЯ 1907 Г.

Հարավային կողին՝ 2 սող.

ЕКАТЕРИНА АЛЕКСЪЕВНА/ ХАЛАТОВА.

38. Տապանաճար նույնատիպ: Վրան՝ 7 սող.

Ի ՅԻՇԱՏԱԿ / ԲԱԽՇԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ / ԽԱԼԱԹԵԱՆԵՑ./ ՎԱԽՃԱՆ / ԵԱԼ, 1896 ԱՄԻ Ի / 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ / ՄՈՍԿՈՒԱ:

Հյուսիսային կողին՝ БАХШИ КИРИЛЛОВИЧЪ/ХАЛАТОВЪ./

Հարավային կողին՝ РОД. 14 МАЯ 1814 Г./ СКОНЧ. 26 НОЯБРЯ 1896 Г.

39. Երեք մատուռ-գամբարաններ, գորշ ավազաքարից: Հյուսիսային կողմինը՝ կարմրավուն գրանիտից, գմբեթավոր: Սրա հյուսիսային պատին՝ 8 սող.

ԳԷՈՐԳ / ԲԱՆԱՆԵԱՆ, / ՄՆԱԻ / ՌՊԼԴ (1834)Թ. ՓՐԿՁԻ Ի ԺԱ.(11) ՄԱՐՏԻ / Ի ՂԱԼԱՐ, / Ի ՏԷՐ ՀԱՆԴԵԱԻ / ՌՊՂԷ (1897)Թ. ՓՐԿ [ՁԻ], Ի Դ (4) ՅՈՒՆԻՍԻ:

Հարավային կողին՝ 4 սող.

ГЕОРГИ ИЛЪИЧЪ/ КАНАНОВЪ./ РОДИЛСЯ 1834 ГОДА ВЪ КИЗЛЯРЪ./ СКОНЧАЛСЯ / 1897 ГОДА 4-ГО ИЮНЯ.

Մանոթ. Հայանի մանկավարժ, պատմաբան, հասարակական գործիչ Գևորգ Քանանյանը ծնվել է 1834 թ. Ղզլարում (ըստ տապանագրի): Ավարտել է Սաավրոպոլի գիմնազիան (1854թ.), ապա՝ Մոսկվայի կայսերական համալսարանի պատմա-լեզվագրական ֆա-

Լուսանկ (1858թ.), 1861-ին սաացել է մադիսարտսի ասաիճան: 1861-1881 թթ. եղել է Լազարյան ճեմարանի տեսուչ, 1881-1897-ին՝ վերաօեսուչ (ոեկտոր): Դասավանդել է Մոսկվայի Համալսարանում, Լազարյան ճեմարանում և այլուր: Գ. Քանանյանի գործունեության շրջանում Լազարյան ճեմարանը վերածվեց ընդհանուր դպրոցի: Նա եռանդուն մասնակցություն է ունեցել ճեմարանի ուսումնական ծրագրերի մշակման, շենքի նորոգման աշխատանքներին: Գ. Քանանյանը Գամառ-Քաթիսյա ընկերության հիմնադիրներից է (1854 թ.), ընդամենը հողվածներ է դրել արևմտահայերի կյանքի ծանր միճակի, ինչպես նաև Լազարյան ճեմարանի պատմության վերարդարում: Գ. Քանանյանի ետակի համաձայն՝ նոր Ջուղայում հիմնադրվել է «Գեորգ Քանանյան» երկսեռ դպրոցը, որը 1915-1916 ուս. ամիսում վերածվել է Օրիսուրացի դպրոցի (մանրամասն աես ՀԱՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 441, ինչպես նաև՝ Братская помощь пострадавшим в Турции армянам, 2-е изд., М., 1898, с. 545-548):

Լուսանկ. 5, 5-ա

40. Կոթող սե դրանիաից, նախորդի մոա: Արեւելյան կողին՝ 2 առդ.  
ՍՈՂՈՄՈՆ ԹԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ / ՏԵՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆՑ:

41. Այնուհետեւ՝ ուսուցիչն 7 առդ.  
ДА УСПОКОИТЬ ТЕБЯ ВЪ ВЕЧНОМЪ БЛАЖЕНСТВѢ (կիսաշրջանաձև) НАДВОРНЫЙ СОВѢТНИК/ И КАВАЛЕРЪ/ СОЛОМОНЪ АРТЕМЬЕВИЧЪ/ ТЕР-ГУКАСОВЪ./ РОДИЛСЯ 1 ИЮЛЯ 1801./ СКОНЧАЛСЯ 16 АПРѢЛЯ 1861 Г.

42. Տապանաքար սե դրանիաից, Հյուսիսային կողին՝ 5 առդ.  
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ / ԵՂԻՍԱԲԷԹ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ / ԲԻՐԱԴԵԱՆՑ, / ՎԱԽՃԱՆՆԵՑԱԻ Ի 1850 / Ի 28 ԱՊՐԻԼԻ Ի ՀԱՍԱԿԻ 80 ԱՄԱՑ:

43. Այնուհետեւ՝ ուսուցիչն 4 առդ.  
ЗДѢСЬ ПОКОИТСЯ/ ИЗЪ ДВОРЯНЪ ЕЛИЗАВЕТА СТЕПАНОВНА/ ПИРАДОВА/. СК. В 1850 Г. АПРѢЛЯ 28 ДНЯ, ИМѢЯ ОТ РОДУ 80 ЛЕТЪ.

44. Տապանաքար սե մարմարից, դադաղաձև. Հյուսիսային կողին՝ 3 առդ.  
Ի ՆԵՐՔՈՑ ԱՅՍՐ ՎԻՄԻ ԱՄՓՈՓԻ ՄԱՐՄԻՆ ԿԱՊԻՏԱՆԻ ԶՕՐԱՑՆ ՌՈՒՍԱՑ / ԿԱՐԱՊԵՏ ԵՍԱՅԵԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՈՎԻ Ի 50 ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ Ի ՏՐ / Ի 18 ՄԱՐՏԻ 1827 ԱՄԻ Ի ՄՕՍԿՈՎ:

Ապա՝ ուսուցիչն.  
ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ ОТСТАВНАГО КАПИТАНА ГЕРАСИМА ИСАЕВИЧА МАНУЧАРОВА (շարունակությունը՝ ինչպես հայերենում):

45. Քառակող կոթող սե դրանիաից, պատվանդանով, վրայի խաչն ընկած: Արևմտյան կողերին՝ 6-ական առդ հայերեն, ուսուցիչն և լատիներեն.

ԸՆԴ ՎԻՄԱԻՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ԴԷԻՍՏՎԻՏԷԼՆԻ ՍՏԱՍՍԿԻ ՍՕՎԵՏՆԻԿ / ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԼԵՋՈՒԱՑ / ՂԱԶԱՐՈՍԻ ԷՄՄԱՆՈՒԷԼԵԱՆ / ԼԱԶԱՐԵԱՆՑ. / ՎԱԽՃԱՆՆԵԼՈՑ Ի 18 ՅՈՒՆԻՎԱՐԻ 1884 ԱՄԻ / Ի ՀԱՍԱԿԻ 62 ԱՄԱՑ:

Արևելյան կողին.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ТѢЛО/ ДѢЙСТВИТЕЛЬНОГО СТАТСКАГО СОВѢТНИКА/ МАГИСТРА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ/ ЛАЗАРЯ ЕММАНУИЛОВИЧА/ ЛАЗАРЕВА./ СКОНЧАВШАГОСЯ 18 ЯНВ. 1884 ГОДА.

Լուսանկ. 6, միայն հայերենը

46. Հյուսիսային կողին՝ լատիներեն 6 առդ.

GIAIT/ LE / PROFESSOUR CONSEILLER DETAT ACTUEL/ LAZAR  
EMMANOUILOWITCH/ LAZAREFF/ MORT LE 18 JANVIER 1884 A` L'AGE 62 ANS.

Թարգմ. Պեասական խորհրդական պրոֆեսոր Ղաղարոս Էմանուելյան Լազարեանց.  
մահացավ 1884 թ. հունվարի 18-ին 62 տարեկան հասակում:

47. Հարավային կողին՝ 12 տող.

ՄԱՐԻԱՄ ԿՈՅՍ, ՕԳՆԵԱ՝ ԻՆՁ ՏԱՌԱՊԵԼՈՅՍ,  
ԿԸՍԿԸՄԱԳԻՆ ՆԵՂՈՒՅԵԼՈՅՍ ՑԱԻԵԼՈՅՍ,  
ԼԵՐ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ՄԻԱԾԻՆ ՈՂՈՐՄԻԼ ԳԵՐՈՒՍ,  
ՀՈԳԻՈՎ ՊԱՂԱՏԻՄ ԱԶԱՏԵԼ ՏՐՏՄԵՑԵԼՈՅՍ:  
ԱԶԱՏԻՐ ԻՆՁ ՔՍ ԲԱՆԳ ՓՐԿՉԱԿԱՆ  
ԱՊԱԻԻՆԻՄ Ի ՔԵՋ ԿԵՆԱՑ ԳԱԻԱԶԱՆ,  
ԱՐԺԱՆԱՑՈՒՐ ՄԵՂԱԻՈՐԻՍ ԳՈԼՈՎ ԱՆԱՐԺԱՆ,  
ՄԻ ԹՈՂՈՒՐ ՋԻՍ ԱՆՏԵՍ ԳԱԼՍՏԵԱՄԲԳ:  
ՀՐԱԺԱՐԵՑԱՑ ԱՇԽԱՐՀԻՑ ԻՄ ԱՍՏ ԼԻՆԵԼՈՎ,  
ՀԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԱՄԵՆԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՎ,  
ՊԱՆԴՈՒԽՏ ԵՒ ՆԺԴԵՀ ՎՇՏԱԿԻՐ ՄԱՐՄՆՈՎ  
Ի ՀԸՆՏԱՆԵԱՑ, ՈՐԳԻՈՑ ԿԱՐՕՏ ՄԵԱԼՈՎ:

48. Կոթող սև գրանիտից, արևմտյան կողին՝ 4 տող.

ՆՈՐԱԻԱՐՏ ՈՒՍԱՆՈՂ / ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ / ԱՏՈՄ ԱՏՈՄԵԱՆ / 21 ՓԵՏՐՎԱՐԻ  
1863+9 ՆՈՅՄԲԵՐԻ 1888:

Արևելյան կողին՝ ուղևորեն 3 տող.

НОВОКОНЧИВШИИ СТУДЕНТЫ/ МОСКОВ. УНИВЕРСИТЕТА/ АТОМЪ АТОМЪРИЦЪ  
(շարունակ. ինչպես հայերենում):

Հարավային կողին՝ 7 տող.

ՏԱՌԱՊԵԱԼ ՍԻՐՈՒՍ ՍԱՌԸՆ ԳԵՐԵՋՄԱՆ,  
ՈՐՀ, ՄԸՆԱՍ ԲԱՐԵԱԻ, ՔՈ ՄԷՋ ՅԱԻՏԵՆԱՆ  
ԹԱՂՈՒՄ ԵՄ ԱՆՑԵԱԼ ՕՐԵՐԻՍ ՏԱՆՋԱՆՔ  
ԵՒ ՑԱԻՈՏ ՍԸՐՏԻՍ ԱՆՋՈՒՍՊ ՀԱՌԱՉԱՆՔ.  
ԹԱՂՈՒՄ ԵՄ ԱՆՑՈՅՍ ՓԱՅԼՈՒՆ ԱՐՑՈՒՆՔԻՍ  
ՑԱՄԱՔԱԾ ԱՂԲԻՐ... ԵՒ ԹԸՄՐԱԾ ՀՈԳԻՍ:

ԱՏ. ԱՏՈՄԵԱՆ (1887):

49. Տապանաձև կարմիր գրանիտից, վրան խաչ, որի ստորե՝ հայերեն և ուղևորեն

1-ական տող.

ՎԱՐԳԱՆ ԱՔԻՄԵԱՆ / Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ 1902 թ.

ВЛАДИМИРЪ НИКОЛАЕВИЧЪ АКИМОВЪ (շարունակ. ինչպես հայերենում):

50. Տապանաձև նույնաձև, նախորդի կողքին, փոքր-ինչ ղեպի ձախ, վրան՝ ուղևորեն  
4 տող.

ГЕНЕРАЛЪ=ОТЪ=КАВАЛЕРІЙ/ НИКОЛАЙ АГАФОНОВИЧЪ/ АКИМОВЪ/, СКОНЧ. 19  
ИЮЛР 1913 Г.

51. Տապանաձև կարմիր գրանիտից, պատվանդանի արևելյան կողին՝ 4 տող.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ / ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ / ԾՆԵԱԼ 25-ԻՆ ՍԵՊՏ. 1881 թ. / ՎԱԽՃ. 29-ԻՆ  
ՕԳՈՍ. 1911 թ. (նույնը՝ ուղևորեն):

52. Կոթող կարմիր ղրանիտից. արևմտյան կողին՝ 3 տող.

ԱՅՍ է ՇԻՐԻՄ / ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԵՂԲՈՐՑ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԴԱԻԹ ԱԲԱԶՅԱՆՆԵՐԻ / ՎԱԽՃԱՆԵԱԼ 26  
ԵՒ 13 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ:

*Ռուսերեն միայն՝*

ГРИГОРИЙ АBA3OB, 1859-1885.

53. Կոթող սև զրանիաից, խորանիկներով, որոնց մեջ՝ 4 առդ.

ՇՈՒՇՈՒԱՅ ՔԱՂԱՔԻ / ԲՆԱԿԻՉ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ ԱԻԱԳ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ / ԿԵԱՆՋԵՑԵԱՆՑ / ՎԱԽՃ. 30 ԴԵԿՏ. 1895, Ի ՀԱՍԱԿԻ 21 ԱՄԱՑ:

*Նույնը՝ ռուսերեն, սակայն ազգանունը* КАНДЖУНЦЕВ.

54. Կոթող սև զրանիաից, պատվանդանով, որի վրա զլուխը խաչին հենած հրեշապ:

*Պատվանդանին՝ 5 առդ.*

ПОТОМСТВЕННЫЙ ДВОРЯНИНЪ/ МИХАИЛЪ АКИМОВИЧЪ/ КАЛАНТАРОВЪ/, СКОНЧ.  
20 ФЕВР. 1890 Г./НА 47 ГОДУ.

55. Կոթող սպիտակ մարմարից, կողքին ընկած պատվանդանի արևելյան կողին՝ 5 առդ.  
ՂՋԼԱՐԵՑԻ / ՄԱՐԻԱՄ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ / ԻՋՄԻՐԵԱՆ / ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 15 ՅՈՒՆԻՍԻ 1881 ԱՄԻ /  
Ի ՀԱՍԱԿԻ 55 ԱՄԱՑ:

56. Կոթող սև զրանիաից, վրան զորչավուն զրանիաից ոռոսական խաչ, ծալքավոր պատ-  
վանդանին՝ 4 առդ.

ԿԱՏԱՐԻՆԷ ԳԷՈՐԳԵԱՆ / ՄԱՂԱՔԵԱՆՑ / ՎԱԽՃ. 11 ՄԱՐՏԻ / 1912 Թ. 60 ԱՄԱՑ:

*Ապա ռուսերեն ասրերակը՝ 3 առդ.*

ЕКАТЕРИНА ЕГОРОВНА/ МАЛАКОВА / (շարունակությունը ինչպես հայերենում):

57. Տապանաքար սև զրանիաից, զլխին խաչ, սառև՝ 3 առդ.

АННА ИВАНОВНА/ СЕРЕБРЯКОВА/ СК. 10 ДЕК. 1911 Г.

58. Կոթող կարմիր զրանիաից, արևելյան կողին՝ 7.առդ.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ / ՅՈՎԱԿԻՄՍԵ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ / ԳՈՐԳԻԱՆՑ / ՂՋԼԱՐԵՑԻՈՑ / ԾՆ. Ի 21  
ՕԳՈՍՏ. 1854, / ՎԱԽՃ. 27 ՅՈՒՆՎԱՐԻ / 1911 Թ.:

*Նույնը՝ ռուսերեն:*

59. Տապանաքար սև զրանիաից, վրան խաչ, սառև՝ 3 առդ.

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍԵԱՆ / ԹԱՆԴԵԱՆ / , 1854-1912:

*Նույնը՝ ռուսերեն:*

60. Տապանաքար սև զրանիաից, խաչից վեր՝ 3 առդ.

ՅՈՐԺԱՄ ԳԱՍ ՓԱՌՕՔ / ՅԱՀԱԳԻՆ ԱԻՈՒՐՆ / ՅԻՇԵԱ ՋԻՍ ՔՐԻՍՏՈՍ:

*Խաչից ներքև՝ 2 առդ.*

ԱՆՆԱ ՍՏ. ԹԱՆԴԵԱՆ / և АННА СТЕПАНОВНА ТАНДОВА 1823+ $\frac{1}{28}$  1910.

61. Կոթող զորչավուն զրանիաից, արևելյան կողին՝ 5 առդ.

ԱՍՂԱՔԱՏԻ ԲՆԱԿԻՉ / ԿԱՏԱՐԻՆԷ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ / ՂԱՅԱՄԵԱՆՑ / ԾՆ. 1880 ՅՈՒՆՎ. 12,  
ՎԱԽՃ. 1909 ՕԳՈՍՏ. 23:

62. Արևմտյան կողին՝ 3 առդ.

АСХАБАДСКАЯ КУПЧИХА/ ЕКАТЕРИНА ИВАНОВНА/ ГАЯМОВА.

*Ապա՝ 4 առդ.*

ЗАЧЕМЪ ТАКЪ СКОРО ОТКАЗАВУИИСЬ  
ОТЪ БЛАГЪ И РАДОСТИ ЗЕМНОЙ  
СЛАДКОЙ ЖИЗНИ НЕ ДОЖДАВШИСЬ  
ПРИНЯЛА НАВЪЕКИ ПОКОЙ...?!

63. Կոթոզ սե. գրանիտից, հանդուցյալի նկարով, որն այժմ անդուժ չէ. արևմտյան կողին՝  
4 անդ.

ՄՈՍԿԻԱՅԻ ԳԻՄՆԱԶԵԱՅԻ 5-ԵՐ [Ր]ՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ/ԱՇԱԿԵՐՏ ՇՈՒՇԵՑԻ ԱՐՏԷՄ  
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ/, ԾՆ. Ի 1893 ՀՈԿՏ. 24-ԻՆ./ ՎԱԽՃ. 1909 Թ. ՅՈՒԼԻՍԻ 18-ԻՆ:

64. Կոթոզ սե. գրանիտից, հարթեցրած մակերեսին՝ 4 անդ.

